



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Մ Ա Ն

16 փետրվարի 2017 թվականի N 133 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2003 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒԼԻՄԻ 3-Ի N 825-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ մ ւ ն է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հուլիսի 3-ի «Հայաստանի Հանրապետության օդային տարածքի կազմակերպման կարգը հաստատելու մասին» N 825-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) որոշման վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕԴԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱ-
ԿԵՐՊՄԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ՕԴԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ».

2) որոշման նախաբանը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ղեկավարվելով «Ավիացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասով, 10-րդ հոդվածի 2-րդ մասով և 11-րդ հոդվածի 3-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ մ ւ ն է.**».

3) որոշման 1-ին կետը «Հանրապետության» բառից հետո լրացնել «օդային երթևեկու-
թյան կազմակերպման միասնական համակարգի գործունեության և» բառերով.

4) որոշման հավելվածում՝

ա. վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕԴԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԿԱԶ-
ՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ
ՕԴԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ»,

բ. 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Հայաստանի Հանրապետության օդային երթևեկության կազմակերպման միասնա-
կան համակարգի գործունեության և օդային տարածքի կազմակերպման կարգը (այսուհետ՝
կարգ) մշակված է «Ավիացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, Հայաստանի
Հանրապետության այլ օրենքների, իրավական ակտերի, 1944 թվականի դեկտեմբերի 7-ին
Չիկագոյում ստորագրված «Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին»
կոնվենցիայի (այսուհետ՝ Չիկագոյի կոնվենցիա), «Օդագնացության անվտանգության համար
համագործակցության մասին «Եվրոկոնտրոլ» 1960 թվականի դեկտեմբերի 13-ին Բրյուսելում
ստորագրված միջազգային կոնվենցիայի դրույթների հիման վրա:»,

գ. 4-րդ կետի 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) աերոնավիգացիոն սպասարկում՝ ներառում է օդային երթևեկության կազմակեր-
պումը, աերոնավիգացիոն կապը և դիտարկումը, աերոնավիգացիայի օդերևութաբանական
ապահովումը, աերոնավիգացիոն տեղեկատվության ապահովումը և վթարափրկարարական
աշխատանքների ապահովումը:»,

դ. ամբողջ տեքստում «լիազոր» բառը և դրա հոլովաձևերը համապատասխանաբար
փոխարինել «լիազորված» բառով և դրա համապատասխան հոլովաձևերով,

ե. 6-րդ կետի «ա» ենթակետից «3-րդ հոդվածի» բառերից հետո հանել «բ» կետի» բառերը,

զ. 6-րդ կետի «բ» ենթակետում «լիազոր մարմինների» բառերը փոխարինել «լիա-
զորված մարմնի» բառերով,

է. 38-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«38. Խոչընդոտ կառուցողը սույն կարգի 36-րդ կետի «ա», «բ», «գ» և «դ» ենթակետերով և 37-րդ կետով սահմանված պահանջների ապահովման նպատակով հայտ է ներկայացնում լիազորված մարմին: Հայտի հետ միասին ներկայացվում են կառուցվող խոչընդոտի շինարարական նախագծերը, որոնցում պետք է արտացոլված լինեն՝

ա. խոչընդոտի նշանակությունը, հիմնական բնութագրերը, անկյունային կոորդինատները. WGS-84 համակարգով և խոչընդոտի բացարձակ ու հարաբերական բարձրությունները,

բ. խոչընդոտի տեղադրման վայրի տեղագրական հանույթը և ռելիեֆային քարտեզը՝ WGS-84 համակարգով,

գ. խոչընդոտի կառուցման ընթացքում օգտագործվող շինարարական տեխնիկան,

դ. կապի և էլեկտրահաղորդման գծերի համար աշտարակային հենարանների բացարձակ ու հարաբերական բարձրությունները,

ե. շինարարության սկզբի և ավարտի ժամկետները,

զ. եթե խոչընդոտը ռադիոհաղորդիչ կամ ընդունիչ պլեհավաք կամ կայմ է, ի լրումն սույն կետի ենթակետերով սահմանված տվյալների, ներկայացվում է օգտագործվող ռադիոհաճախականությունների տիրույթը:»,

ը. 43-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«43. Խոչընդոտներն ապահովվում են ցերեկային և գիշերային մականշումներով՝ համաձայն Չիկագոյի կոնվենցիայի N 14 հավելվածի 6-րդ գլխով սահմանված ստանդարտների: Խոչընդոտի կառուցման ընթացքում ապահովվում են օգտագործվող վերամբարձ շինարարական տեխնիկայի ցերեկային և գիշերային մականշումները:»,

թ. VI գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«VI. ԼՐԱՑՈՒՑԻՉ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄՆԵՐԸ

44. Միջազգային չվերթների իրականացման ընթացքում օդային երթևեկությունն սպասարկող մարմինների և օդանավի անձնակազմի միջև հաղորդակցությունը՝ վերջինիս անգլերեն հարցման դեպքում իրականացվում է անգլերենով:

45. Գեոդեզիական WGS-84 համակարգում անթունավիզացիոն սպասարկման ապահովման հետ կապված կետերի և միջոցների աշխարհագրական կոորդինատների հրապարակման ճշտությանը ներկայացվող պահանջներն են.

Աշխարհագրական լայնություն ու երկարություն	Ճշտությունը
Թռիչքային տեղեկատվության շրջանի սահմանի կետերը	1 րոպե
P, R, D, TSA սահմանային կետերը (CTA/CTR սահմաններից դուրս)	1 րոպե
P, R, D, TSA սահմանային կետերը (CTA/CTR սահմաններում)	1 վայրկյան
CTA և CTR սահմանների կետերը	1 վայրկյան
Երթուղային նավիզացիոն միջոցները, երթուղու կետերը, հատումները, սպասման կետերը և STAR/SID կետերը	1 վայրկյան
1-ին շրջանի խոչընդոտները (պետության ամբողջ տարածքը)	1 վայրկյան
Աերոդրոմի տեղորոշիչ կետը	1 վայրկյան
Աերոդրոմում տեղադրված նավիզացիոն միջոցները	1/10 վայրկյան
3-րդ շրջանի խոչընդոտները	1/10 վայրկյան
2-րդ շրջանի խոչընդոտները	1/10 վայրկյան
Վայրէջքի վերջնական փուլում վերահսկման կետերը և սարքավորումներով իրականացվող վայրէջքի սխեման կազմող այլ կարևոր կետերը	1/10 վայրկյան
Վազբուղու շեմը	1/100 վայրկյան
Վազբուղու վերջը	1/100 վայրկյան
Սպասման տեղը վազբուղու մոտ	1/100 վայրկյան
Ղեկուղու առանցքային գծի կետերը (կանգառ ուղղորդելու գծերը)	1/100 վայրկյան
Ղեկուղիների հատման գծանշումները	1/100 վայրկյան
Ուղղորդման դուրսբերման գիծը	1/100 վայրկյան
Օդանավերի կայանատեղերի և INS համակարգի ստուգման կետերը	1/100 վայրկյան
Կառավարող սահմանները	1/10 վայրկյան
Հակասառցակալման մշակման գոտի	1/10 վայրկյան

46. Համաձայն Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության ստանդարտների՝ անթունավիզացիոն սպասարկման ապահովման նպատակով օգտագործվող քարտեզների ցանկը և հրապարակման մասշտաբներն են.

Քարտեզների անվանումները	Հրատարակվող մասշտաբները
Աերոդրոմային խոչընդոտների քարտեզ	1:10000-1:20000

Տարածքային քարտեզ՝ ճշգրիտ վայրէջքի համար	1:2500-1:5000
Երթուղային քարտեզ	1:1000000-1:2000000
Շրջանային քարտեզ	1:400000-1:600000
Սարքավորումներով իրականացվող մեկնման քարտեզ	1:200000-1:600000
Սարքավորումներով իրականացվող ժամանման քարտեզ	1:200000-1:600000
Սարքավորումներով իրականացվող վայրէջքի քարտեզ	1:200000-1:400000
Վիզուալ կերպով կատարվող վայրէջքի քարտեզ	1:100000-1:250000
Աերոդրոմային քարտեզ	1:20000-1:30000
Աերոդրոմային երթևեկության քարտեզ, օդանավերի կայանատեղերի քարտեզ (սույն քարտեզները կարող են համատեղվել, եթե ապահովվում է դրանց ընթերցելիությունը)	1:10000-1:20000
ՕԵԿ-ի նվազագույն բացարձակ բարձրությունների դիտարկվող քարտեզ	1:50000-1:60000
Աերոնավիգացիոն քարտեզ (1:500000)	1:500000

46.1. Օդային տարածքի տարրերի մասին տեղեկատվությունը հրապարակվում է թղթային և էլեկտրոնային (թվային) տարբերակներով՝ համապատասխան կրիչների վրա:

46.2. Աերոնավիգացիոն սպասարկման ապահովման հետ կապված կետերի և միջոցների գերազանցման, բացարձակ բարձրության, հարաբերական բարձրության հրապարակման ճշտությանը ներկայացվող պահանջներն են.

Գերազանցումը, բացարձակ բարձրությունը, հարաբերական բարձրությունը	Ճշտությունը
Աերոդրոմի գերազանցումները	1 մետր կամ 1 ֆուտ
WGS-84 գեոիդի ալիքն աերոդրոմի ամենաբարձր կետում	1 մետր կամ 1 ֆուտ
Վազբուղու շեմը՝ ոչ ճշգրիտ վայրէջքի մոտեցման դեպքում	1 մետր կամ 1 ֆուտ
Վազբուղու շեմը՝ ճշգրիտ վայրէջքի մոտեցման դեպքում	0,1 մետր կամ 0,1 ֆուտ
Վազբուղու շեմի հատման հարաբերական բարձրությունը (հիմնական կետի հարաբերական բարձրությունը)՝ ճշգրիտ վայրէջքի մոտեցման դեպքում	0,1 մետր կամ 0,1 ֆուտ
2-րդ շրջանի խոչընդոտները	1 մետր կամ 1 ֆուտ
3-րդ շրջանի խոչընդոտները	0,1 մետր կամ 0,1 ֆուտ
1-ին շրջանի խոչընդոտները (պետության ամբողջ տարածքը)	1 մետր կամ 1 ֆուտ
Հեռաչափման սարքավորում՝ ճշգրիտ (DME/P)	3 մետր (10 ֆուտ)
Հեռաչափման սարքավորում (DME)	30 մետր (100 ֆուտ)
Նվազագույն բացարձակ բարձրությունը	50 մետր կամ 100 ֆուտ

46.3. Աերոնավիգացիոն սպասարկման ապահովման հետ կապված կետերի և միջոցների գերազանցման երկարության, հեռավորության, չափսի հրապարակման ճշտությանը ներկայացվող պահանջներն են.

Երկարությունը, հեռավորությունը, չափսը	Ճշտությունը
Օդային մայրուղու հատվածի երկարությունը	1/10 կմ կամ 1/10 ծ. մղոն
Հեռավորությունը, որը կիրառվում է երթուղում հսկողական կետեր տեղադրելիս	1/10 կմ կամ 1/10 ծ. մղոն
Աերոդրոմի շրջանում մեկնման կամ ժամանման երթուղու հատվածների երկարությունը	1/100 կմ կամ 1/100 ծ. մղոն
Հեռավորությունը, որը կիրառվում է աերոդրոմի շրջանում հսկողական կետեր տեղադրելիս և սարքավորումներով իրականացվող վայրէջքի սխեմաներում	1/100 կմ կամ 1/100 ծ. մղոն
Վազքուղու երկարությունը	1 մետր կամ 1 ֆուտ
Վազքուղու լայնությունը	1 մետր կամ 1 ֆուտ
Հեռավորությունը՝ մինչև վազքուղու տեղափոխված շենր	1 մետր կամ 1 ֆուտ
Խոչընդոտներից ազատ գոտու լայնությունը և երկարությունը	1 մետր կամ 1 ֆուտ
Արգելակման վերջնագոտու լայնությունը և երկարությունը	1 մետր կամ 1 ֆուտ
Վայրէջքի համար տրամադրվող երկարությունը	1 մետր կամ 1 ֆուտ
Թափավազքի համար տրամադրվող երկարությունը	1 մետր կամ 1 ֆուտ
Թռիչքի համար տրամադրվող երկարությունը	1/100 վայրկյան
Ընդհատված թռիչքի համար տրամադրվող երկարությունը	1/100 վայրկյան
Վազքուղու կողային անվտանգ գոտու լայնությունը	1 մետր կամ 1 ֆուտ
Ղեկուղու լայնությունը	1 մետր կամ 1 ֆուտ
Ղեկուղու կողային անվտանգ գոտու լայնությունը	1 մետր կամ 1 ֆուտ
Վազքուղու վերջի և ILS համակարգի կուրսային ռադիոփարուսալեհավաքի միջև եղած հեռավորությունը	1 մետր կամ 1 ֆուտ
Վազքուղու շենի և ILS համակարգի գլիսադային ռադիոփարուսալեհավաքի միջև եղած հեռավորությունը վազքուղու առանցքագծով	1 մետր կամ 1 ֆուտ
Վազքուղու շենի և ILS փարուսի միջև եղած հեռավորությունը	1 մետր կամ 1 ֆուտ
Վազքուղու շենի և DME ILS ռադիոփարուսալեհավաքի միջև եղած հեռավորությունը վազքուղու առանցքագծով	1 մետր կամ 1 ֆուտ

ժ. 54-րդ կետում «Սույն գլխի 49-րդ, 51-րդ և 52-րդ» բառերը փոխարինել «Սույն գլխի 49-րդ, 51-րդ, 52-րդ և 53-րդ» բառերով,

ժա. 55-րդ կետում «Սույն գլխի 47-րդ, 49-րդ, 52-րդ և 53-րդ» բառերը փոխարինել «Սույն գլխի 47-րդ, 49-րդ և 52-րդ» բառերով,

Ժբ. 55-րդ կետում «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության» բառերը փոխարինել «լիազորված մարմնի» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2017 թ. փետրվարի 20
Երևան

